ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 138-Ա/Ն «15» 08 2024թ.

«ՔԼԻՆ ԶՈՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/58» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունն առ այն, որ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «Քլին Զոն» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները, և «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Քլին Զոն» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Քլին Զոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02662083, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 109/21) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

8/15/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**